ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«16» Հոկտեմբեր 2023 թվականի N: 396-Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N:1657-Ն որոշման և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված թվով 32 ընտանիքներին վառելիքով ապահովելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 1320 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 1212 «Տարածքային զարգացում» ծրագրի 12030 «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների տրամադրում» միջոցառմամբ Շիրակի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցություն կազմակերպելու նպատակով Անի համայնքապետարանի աջակցող գործառույթների, քարտուղարության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Սամվելի Գրիգորյանին /նույնականացման քարտ՝ 003451556, տրված 04.03.2014թ. 022/ հատկացնել 830.000 /ութ հարյուր երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը և տասնհինգօրյա ժամկետում ֆինանսական միջոցների ծախսը հավաստող հաշվետվության ներկայացումը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է